Թուականն Գիւրջիվանու եկեղեցւոյ արձանագրութեան մէջն է, տես չարք վանահարցն։

Այս գերեզմանին կից է մի ուրիշ գերեզման, որոյ Խաչքարի վերայ գրուած է՝

«Սուրբ Խաչս բարեխօս Եղիսաբէթ կուսին, ՌՃԳ» (1654)։

Յիշեալ գերեզմանաց հանդէպն՝ մի գերեզմանի վերայ գրած՝

«Այս է տապան ՄԻԱՅՆԱԿԵԱՑ տէր Յովս՛փ վարդապետի . . . ՌՄԽԸ թվին (1797)։

Թումայ վարդապետի Խաչքարի հարաւ կողմին մի քարի վերայ՝

«Այս է տապան Ներսէս վարդապետի . . . թվ. Ռ.» (1551)։

Կան և շատ գերեզմանք հինաւուրց վանքի վերևն, վարդապետաց, կուսանաց քահանայից և այլոց. զորօրինակ Տփխիսեցւոց, Ձուշեցւոց, Գանձակեցւոց, Շամախեցւոց, որոց մին է Շամախեցի Մարկոս քահանայի, որ ըստ աւանդութեան է հօրապապն Լալայեանց այժմեան իշխանաց։ Պարսպի մէջ կան երկու Տփխիսեցւոց գերեզմանք մինն այսպիսի գրով՝

«Այս է հանգիստ Թ՛իֆլիզեցի Ցագինի որդի մամարթ Ասլանին թվ. ՌՃՁՁ»։

Իսկ միւսի վերայ գրած՝

«Այս է տապան Թիֆլիզեցի Ղազարի որդի Մելքումին։ Նոյն ՌՃՁՁ. Թուին (1730)։